ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ
(XVIII դար – XX դարի սկիզբ)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հայերը Հունգարիայում բնակություն են հաստատել սկսած X դ.: XV–XVI դդ. շուրջ 3000 հայ ընտանիքներ Մոլդովայից տեղափոխվել են Հունգարիա: Հայերը Տրանսիլվանիայի իշխաններից ստացել են ղանաղան արտոնություններ: Հայաշատ Գեռլա և Եղիսաբեթուպոլիս քաղաքներում նրանք ունեցել են ներքին ինքնավարություն՝ քաղաքային վարչություն, դատարան, հայ քաղաքագլուխ, կառուցել են եկեղեցիներ, հիմնադրել դպրոցներ, մատենադարան-գրադարաններ, թատրոն, հիվանդանոց և այլն:

Դարեր շարունակ ապրելով Հունգարիայում, հայերը մասնակցել են երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին: Կռվել են երկիրը օսմանյան լծից ազատագրելու համար, մասնակցել են 1848–1849 թթ. հեղափոխությանը, եղել կամավորներ, կազմել են պահակաղորքեր, հայթայթել զենք-զինամթերք, հիմնել հոսպիտալներ և այլն:

Հայերը Հունգարիային տվել են բազմաթիվ երևելի անհատներ, որոնք զգալի գեր են ունեցել գիտության ու արվեստի ամենատարբեր բնագավառներում: Հունգարական մշակույթի անքակտելի մասը կազմող բժշկությունը ևս անմասն չի մնացել հայերի ներդրումներից: Հունգարիայի բժշկության բնագավառում հայերի մատուցած մեծ ծառայությունը չէը կարող վրիպել հունգար բժիշկ-պատմաբանների ուշադրությունից: Ուստի պատահական չէ, որ Հունգարիայի ԳԱ և Բժշկության պատմության թանգարանի կողմից հրատարակվող «Հունգարիայի բժշկության պատմությունը» ամենամյա հանգեսի 1970-ական թվականների սկզբների համարներից մեկում տեղ է գտել Բալաշ Բուջիի/Բուդիի «Զիբենբուրգենի հայ բժիշկների դերը բժշկագիտության պատմության մեջ» գերմաներեն հոդվածը: Նա գրում է, որ Սամոշույվարի և այլ բնակավայրերի հայկական դպրոցների շրջանավարտները Վիեննայում մեծ մասամբ իրավաբանական և բժշկական կրթություն էին ստանում: Հայ բժիշկների թիվը այնքան է մեծացել, որ Սամոշույվարը և Էրժեբեթվարոշը դարձել են Հունգարիայի լավագույն բժշկական կենտրոնները: Ուստի պատահական չէ, որ 1738 թ. Սամոշույվարում հայերը հիմնադրել են Հունգարիայի առաջին դեղատունը: Հայ բժիշկները արժանացել են հունգարական արքունիքի բժշկական սպասարկման պատվին: Բալաշ Բուջին գրում է. «Հայ բժիշկների դերը Հունդարիայի բժշկության զարգացման գործում այնքան ակնառու է, որ անհրաժեշտ է այդ հարցին նվիրել առանձին ուսումնասիրություն»:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում տարբեր աղբյուրներից հավաքած հունգարահայ 15 անվանի բժիշկների համառոտ կենսագրականները:

Աբրահամ Ադեոդատ: *Հայտնի է նաև Ագեոդատ Պոտանիուշ-Աբրահամ կամ Դեզա Ագեոդատ կամ Պոտանտյուշ անուններով: Իսկական անունը եղել է Աստուր կամ Աստվածատուր Աբրահամյան: Ծնվել է 1835 թ., Հունգարիայի Շելմեցբանյա քաղաքում: 1846 թ. ավարտել է Համալսարանի բժշկական բաժինը և արժանացել բժշկության դոկտորի տիտղոսի: Ունեցել է պրոֆեսորի կոչում: 1870 թ. ընտրվել է Հունգարիայի հիգիենիստների միության կենտրոնական խորհրդի անդամ: 1873, 1879, 1885 թթ., երեք անգամ երկուական տարով նշանակվել է Բուդապեշտի քաղաքագլուխ: Երկար տարիներ զբաղվել է Հունգարիայի մայրաքաղաքի կոմունալ և կենցաղային հիգիենայի խնդիրներով: 1869 թ. արժանացել է հիգիենիկ բժշկության գծով թաղավորական խորհրդականի կոչման: Եղել է նաև հռչակավոր վիրաբույժ: Երկար տարիներ եղել է Կոլոշվար քաղաքի վիրաբուժության ինստիտուտի ամբիոնի վարիչը: Աշխատել է նաև Բուդապեշտի համալսարանում: Հունգարիայի առողջապահական համակարգում վարել է բարձր պաշտոններ: Լինելով անվանի վիրաբույժ և հիգիենիստ, զբաղվել է նաև մեխանիկայով, եղել տեխնիկական գիտությունների դոկտոր: Դասավանդել է Բուդապեշտի պոլիտեխնիկական ինստիտուտում: Հեղինակ է 36 գրքի և 35 գիտական հոդվածների: Եղել է «Ճարտարագիտական տեղեկատու», «Տեխնիկա», «Հունգարական տեխնիկա», «Պոլիտեխնիկական ինստիտուտի տեղեկագիր» հրատարակությունների խմբագիրը: Հունգարիայում Ադեոդատ Պոտանիուշ-Աբրահամի անունով սահմանված է մրցանակ, որով պարգևատրվում են երկրի առավել ակնառու գյուտարարները:*

Ագոնց Կարոյ: *Ազգանունը գրվում է նաև Ակոնչ կամ Հակոնց տարբերակներով: Ծնվել է 1861 թ., Հունգարիայի հայահոծ Կոլոժվար (այժմ Կլուժ) քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Կոլոժվարում և Սիբիուում: Ավարտել է Բուդապեշտի համալսարանի բժշկական բաժինը: Աշխատել է Թաուֆերի բուժարանում: Հետագայում աշխատել է Արադում: Երկար տարիներ եղել է Կոլոժվարի կանանց հիվանդանոցի և ծննդատան տնօրենը, Տրանսիլվանիայի պետական երկաթուղու բժշկապետը, համալսարանի պրոֆեսոր: Եղել է Հունգարիայի անվանի բժիշկներից մեկը: Հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների: Մահացել է 1925 թ.:*

Ագոնց-Փուիովիչ Ժորժ (Գեորգ): *Բժշկական համալսարանն ավարտել է Վիեննայում, 1878 թ.: Եղել է զորավար:*

Ավետիք Ստեփան: *Ծնվել է 1804 թ. օգոստոսի 19-ին, Հունգարիայի Հայսոց (հետագայում՝ Հարավսլավիայի) քաղաքում: 1831 թ. ավարտել է Վիեննայի համալսարանի բժշկական բաժինը և ստացել բժշկության դոկտորի տիտղոս: Ավարտաճառը 1831 թ. հրատարակվել է Մխիթարյան միաբանության տպարանում, և համարվում է այդ բնագավառի ուշագրավ աշխատություններից մեկը: 1847–1848 թթ. ապրել է Վիեննայում: 1848 թ. ակտիվորեն մասնակցել է հեղափոխությանը, Վիեննայում նրա անունով*

վողոց կա՝ Ավետիք: Եղել է գիտնական-ակնաբույժ և հասարակական-պետական գործիչ: Ունեցել է պրոֆեսորի կոչում: Մահացել է 1884 թ., Վիեննայում:

Բադրուպանի Գերգելի: Իսկական անունը եղել է Գերգել, Գրիգոր կամ Գևորգ Բադրուպանյան կամ Պատրուբանյան: Ծնվել է 1830 թ. Հունգարիայի (Տրանսիլվանիայի) հայաշատ էրժեբեթվարոշ (Եղիսաբեթուպոլիս, այժմ Ռումինիայի Դումբրէվանի քաղաք) կամ Ամոշույվար (այժմ՝ Գեռլա) քաղաքում: Ավարտել է Բուդապեշտի համալսարանի բժշկական բաժինը: Բժշկական գիտելիքները կատարելագործելով Վիեննայում, որպես պրակտիկ բժիշկ վերադարձել է Բուդապեշտ: 1856/59/60 թ. պաշտպանել է թեզ և արժանացել բժշկության դոկտորի կոչման: 1863–73 թթ. եղել է Բուդապեշտի վակցինաների պետական ինստիտուտի տնօրենը և վակցինացիայի առաջատար մասնագետը: 1869 թ. հաստատվել է Բուդապեշտում և ստացել պբիվաա (առտնին) պրոֆեսորի, ապա՝ պրոֆեսորի կոչում: Միաժամանակ Բուդայում զբաղվել է ռևմատիկ հիվանդների բուժմամբ: 1869 թ. ընտրվել է Բուդապեշտի խորհրդարանի երեսփոխան: 1869 թ. նշանակվել է Հունգարիայի կայսեր խորհրդական: 1873, 1879, 1885 թթ. ընտրվել է Բուդապեշտի առաջատար քաղաքային բժիշկ: Եղել է Բուդապեշտի բժիշկների թաղավորական ընկերության քարտուղարը: Հանդիսանալով Հունգարիայի առաջին բժիշկ-ուրբանիստը մեծ ավանդ ունի երկրի, մասնավորապես մայրաքաղաք Բուդապեշտի կոմունալ հիգիենայի զարգացման գործում: Եղել է ճանաչված գիտնական-հիգիենիստ և զբաղվել քաղաքային հիդիենայի ամենատարբեր խնդիրներով՝ օդի մաքրությունից մինչև բնակարանային պայմանների բարելավումը: Սկսել և հաջողությամբ անցկացրել է քաղաքի հյուղակները վերացնելու գործընթացը: Հունգարերեն է թարգմանել գերմանացի գիտնական Վիրխովի աշխատությունը բջջային ախտաբանության մասին: Զբաղվել է նաև հայագիտությամբ: Մահացել է 1891 թ.: Նրա որդի Լուկաչը Հունգարիայի հայագիտության առաջին պրոֆեսորն է:

Բոբյան Հուլիոս: Ապրել է XIX–XX դդ.: Աշխատել է Կրոսվարտայնիում: Լինելով բժիշկ, եղել է ազգային զորքի հազարապետ:

Գոպչա Լասլո: Ազգանունը գրվել է նաև Կոպչա ձևով: Իսկական ազգանունը եղել է Գոպչյան: XVIII–XIX դդ. Հունգարիայի անվանի բժիշկներից մեկն է եղել:

Գոպչա Յակոբ: Ազգանունը գրվել է նաև Կոպչա ձևով: Իսկական ազգանունը եղել է Գոպչյան: Եղել է XVIII–XIX դդ. Հունգարիայի անվանի բժիշկներից մեկը:

Դոնոգան Զաքարիաշ: Իսկական անունն է Տոնականյան Զաքարիա: Ծնվել է 1868 թ., Հունգարիայի Շյուլելմետ քաղաքում: 1891 թ. ավարտել է Կոլոժվարի համալսարանի բժշկական բաժինը և ստացել բժշկության դոկտորի տիտղոս: 1891 թ. աշխատել է Բուդապեշտի համալսարանի ֆիզիոլոգիայի/քիթ-կոկորդ-ականջի հիվանդությունների ամբիոնում՝ որպես սլրոֆեսորի ասիստենտ, հետագայում՝ պրոֆեսոր, ամբիոնի վարիչ: Ֆիզիոլոգիայի ինստիտուտում լինելով Նանդոր Կլյուդի ասիսաենտը, գիտական ուսումնասիրություն է կատարել լարինգոսկոպիայի գծով: Երբ երիտա-

սարդ բժշկի աշխատանքի արդյունքները գերազանցում են ուսուցչի սպասելիքները, վերջինս ընդհարվելով հրաժարվում է նրա հետ աշխատելուց: Զաքարիաշը իր դիտական աշխատանքի ղեկավար գտնելու համար ստիպված է լինում տեղափոխվել այլ կլինիկա: Շուտով հանդիպում է պրոֆեսոր Կետլին, որը ոչ միայն ստանձնում է նրա աշխատանքի ղեկավարությունը, այլև միջնորդում է նրան ֆինանսավորելու և եվրոպական բժշկական կենտրոններ գործուղելու համար: Բժշկական տարբեր հաստատություններում կատարել է ռենտգենառուցքաբանական հետազոտություններ, որոնք նորություն էին այդ տարիների Եվրոպայի համար: 1905 թ. Բուդապեշտի համալսարանում պաշտպանել է գիտական թեզ «Վերին շնչառական օրգանների և թոքերի հիվանդության պատճառները» թեմայով: Համարվում է Հունգարիայի առաջին քիթ-կոկորդ-ականջաբույժը: Հեղինակ է շուրջ 50 դիտական աշխատությունների: Եղել է պետական և մասնավոր մի քանի կլինիկաների կոնսուլտանտ և գլխավոր բժիշկ: Բալաշ Բուրջան նրան անվանել է «Հունգարիայի հռչակավոր հայ բժիշկ»:

Հետաքրքիր է այն փաստը, որ մինչև 1905 թ. նա աշխատել է Բուդապեշտի քաղաքային օպերային թատրոնում: Մշակելով մեներգի կատարման ընթացքում շնչելու և արտաշնչելու յուրատեսակ համակարգ, նա զգալի ավանդ է ունեցել հունգարական երաժշտական արվեստի զարգացման գործում: Մահացել է 1917 թ.:

Դուհան: Կամ Դուհա: Եղել է XVIII–XIX դդ. Հունգարիայի անվանի բժիշկներից մեկը:

Զասասյան Մարտինոս: Ապրել է XIX դ., եղել է Բուդապեշտի համալսարանի ուսուցիչ և վարիչը, հմուտ բժիշկ և անվանի անձնավորություն:

Էոդվեշ Ավգոստինոս: Իսկական ազգանունը եղել է Ոսկերիչյան: XIX դ. եղել է Հունգարիայի գիտությունների ակադեմիայի անդամ:

Թուրչայյան Հովհաննես: XIX–XX դդ.: Աշխատել է Կոլոժվարում:

Իշշեկուց Բելա: Հունգարիայի դիտությունների ակադեմիայի անդամ: 27 երկրների ազգային ակադեմիաների պատվավոր անդամ:

Լենկյելյան Անդրեաս: XIX–XX դդ.: Աշխատել է Սոդմար-Նեմեդիում:

Լեպհոշշեկ Իոժեֆ: Բժշկության և վիրաբուժության ինստիտուտի անատոմիայի պրոֆեսոր:

Կորբուլի Զաքարիաս: Իսկական ազգանունը եղել է Քորբուլի: Եղել է XVIII–XIX դդ. Հունգարիայի անվանի բժիշկներից մեկը:

Մալի Իշտվան: Գրվել է նաև Ատեֆան Մալի: Իսկական անունը՝ Ստեփան Մալիյան: Ծնվել է 1830 թ. հոկտեմբերի 21-ին, Հունգարիայի Հայաշատ Սամոշույվար (այժմ՝ Գեռլա) քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Էորտեոնկեոշ-Ֆյուգեշի գյուղում: 1837 թ. սովորել է Սամոշույվարի Պենսլի դպրոցում: Հետագայում ուսանել է վարպետ Զաքարի մոտ: 1840–45 թթ. սովորել է Բեստերցեի (այժմ՝ Բիստրիցա) Պիուրիստների դիշերոթիկ վարժարանում, 1845–47 թթ.՝ Կոլոժվարի բարձրագույն դպրոցում (լիցեյում): 1847 թ. ընդունվել է Պեշտի համալսարանի բժշկական բաժինը, որպես ուսանող-ունկնգիր: 1853–54 թթ. սովորել է Վիեննայի համալսարանի բժշկական բաժնում: 1855–56 թ. վերադարձել և շարունակել է ուսումը Պեշտի համալսարանի բժշկական բաժնում և ավարտելով այն, ստա-

ցել բժշկության դոկտորի տիտղոս: 1856–58 թթ. բնակվել է Մոչ քաղաքում: 1858 թ. ծնողների հետ տեղափոխվել է Կոլոժվար: Ունեցել է պրոֆեսորի կոչում: Եղել է Հունգարիայի անվանի բժիշկներից մեկը: Զբաղվել է համաճարակաբանության խնդիրներով: Եղել է «Արմենիա» հունգարերեն հայագիտական հանդեսի (1887–1907) հովանավորներից և հիմնական աշխատակիցներից մեկը. այդտեղ տպագրել է իր հոդվածների մեծ մասը: Գրել է հունգարերեն մի շարք հոդվածներ հայ ժողովրդի պատմության և մշակույթի հետ կապված հարցերի մասին: 1906 թ. Կոլոժվարում տոնել է իր բժշկական գործունեության 50-ամյա հոբելյանը: Մահացել է 1908 թ., Բուդապեշտում:

Յակաբհազի Զիգմունդ: Եղել է Հունդարիայի անվանի դեղագործներից մեկը:

Նովագյան Գեորգ: XIX–XX դդ.: Աշխատել է Մարամորուշ Սիկեդիում որպես արքունական դանձուն բժիշկ:

Զաուշ Մարտոն Կրիշաոֆ: Գրվել է նաև Մարտինոս Զավուշ կամ Զաուս: Իսկական ազգանունը եղել է Զաուշյան կամ Զաուսյան Մարտինոս Խաչիկի: Ծնվել է 1796/97 թ. օգոստոսի 8-ին, Հունգարիայի Սաթմար գավառի Ֆելսաբանիա (Ֆելշեո-Պանեա) քաղաքում, XVIII դ. կեսերին Տրանսիլվանիայից Հունգարիա գաղթած մանրավաճառ Խաչիկ Զաուսյանի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է Նոկյ-Վարոտ քաղաքում: Հետագայում սովորել է Նոկյ-Վարոտի արքայական համալսարանի փիլիսոփայության դասընթացում: 1820/23 թ. ավարտել է Պեշտի/Նոկյ-Վարոտի արքայական համալսարանի բժշկական բաժինը և ստացել բժշկության դոկտորի տիտղոս: Սկզբում բնակություն է հաստատել Պեշտ քաղաքում: 1820–23 թթ. զբաղվել է ներքին օրգաններում արյան շրջանառության ֆունկցիաների ուսումնասիրությամբ: 1824–30 թթ. ընտրվել է բժշկական ակադեմիայի քարտուղար, իսկ 1831–34 թթ.՝ դեկան: Զբաղվել է գործնական բժշկությամբ և մանկավարժությամբ: Հեղինակել է ազգային «Անատոմիական լեքսիկոնը»: 1831 թ. եվրոպական մի շարք երկրներում, այդ թվում և Հունգարիայում մոլեգնած խոլերայի համաճարակի ժամանակ բժիշկների մի փոքրիկ խմբի հետ պայքարել է համաճարակի դեմ և փրկել հաղարավոր մարդկանց: Գրել է վիրաբուժության և հիգիենայի վերաբերյալ արժեքավոր մի շարք աշխատություններ, որոնք իրենց տեսակի մեջ մինչև այսօր հույժ կարևոր են: 1834 թ. տեղափոխվել է Վիեննա և որպես դեկան ղեկավարել տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1838–44 թթ. հանդիսացել է Պեշտի համալսարանի բժշկական բաժնի նկարագրական անատոմիայի պրոֆեսորի փոխանորդ, իսկ 1844 թ.՝ պրոֆեսոր: 1859 թ. արքունական խորհրդականի տիտղոսով անցել է վաստակած հանգստի: Երբեք չի կտրվել հայկական համայնքի կյանքից: Հաճախ շրջագայել է Տրանսիլվանիայի հայաբնակ ավաններում ու քաղաքներում: Մահացել է 1860 թ. սեպտեմբերի 11-ին:

Զիֆարյան Փրանցիսկոս: Գրվել է նաև Զիֆրա կամ Ցիֆր Ֆրանց: Իսկական ազգանունը եղել է Զիֆարյան կամ Զարդարյան: Եղել է Հիրդլի երևելի աշակերտը և հռչակավոր անդամաղնին (անատոմ), XIX դ. Հուն-

պարիայի անվանի բժիշկներից մեկը: 1860 թ. եղել է Հունգարիայի Կոլոժվար քաղաքի համալսարանի նկարագրական և տեղագրական անատոմիայի պրոֆեսոր: Հիմնադրել է համալսարանի անատոմիական թանգարանը, մի քանի տարվա ընթացքում պատրաստել բազմաթիվ ուսումնական ցուցանմուշներ: Հունգարիայի առողջապահության նախարարի հրամանով, առանձնահատուկ ծառայությունների համար, նրան միանվագ վճարվել է 400 գուլդեն և տարեկան ևս 155 գուլդեն: Մի քանի տարի անց նրան հատկացվել է ևս 800 դուլդեն՝ «արտասահմանյան հանրահայտ անատոմիական ինստիտուտներ այցելելու և այդտեղ ստացած գիտելիքները հայրենական գիտության օգտին ներգնելու և կիրառելու համար»:

Ռոշ Սամվել: *1770 թ. Հունգարիայի թագուհի Մարիա Թերեզան Նագիսումբաթի (Տիրնաու) հունգարական համալսարանում հիմնել է Հունգարիայում առաջին բժշկական բաժինը, որը 1777 թ. տեղափոխվել է Բուդա: Այս բաժնի դասախոսական կազմը համարյա ամբողջությամբ բաղկացած էր ավստրիացիներից: Միակ հունգարացի դասախոսը եղել է հայազգի Սամվել Ռոշը:*

Սենտ-Դյերդյի Ալբերտ: *Իոժեֆ Լեպհոշչեկի թոռն է: 1917 թ. ավարտել է Բուդապեշտի համալսարանը: 1922–27 թթ. աշխատել է ԱՄՆ-ի Մեյի կլինիկայում: 1927 թ. վերադարձել է Հունգարիա: 1928 թ. զբաղվել է քիմիայով և կատարել մի շարք հայտնագործություններ: Պաշտպանել է գիտական թեզ: Դասավանդել է Հունգարիայի տարբեր համալսարաններում: 1932 թ. կատարել է նոր հայտնագործություն կենսաքիմիայի բնագավառում: 1937 թ. արժանացել է Նոբելյան մրցանակի: 1944 թ. մասնակցել է Հունգարիայի Դիմադրության շարժմանը: 1947 թ. Մկանների ուսումնասիրության ինստիտուտի Ծովային կենսաբանության լաբորատորիայի հրավերով տեղափոխվել է ԱՄՆ:*

Վերզար Գուստավ: *Իսկական անունը եղել է Վրզարյան Գուստավոս: Եղել է XIX դ. Հունգարիայի անվանի բժիշկներից մեկը: Ունեցել է պրոֆեսորի կոչում: Եղել է Հունգարիայի Դեբրեցեն քաղաքի բժշկական ինստիտուտի քիթ-կոկորդ-ականջի հիվանդությունների ամբիոնի վարիչը: Եղել է նաև Սամոշվարիի անվանի գիտական-կուրորտաբան, Բուդապեշտի մերձակա Մորկիգ-Սիկեգի տաք հանքային ջրերի բժիշկը: Մեծ ավանդ ունի հունգարական կուրորտաբանության և բալնեոթերապիայի զարգացման գործում:*

Վերզար Դյորդ: *Իսկական անունը եղել է Գեորգ կամ Գևորգ Վրզարյան: Ծնվել է 1805 թ., եղել է XIX դ. Հունգարիայի ամենահայտնի բժիշկը: Հանդիսանում է Վրզարյան տոհմի հիմնադիրը: Բժշկական կարիերան սկսել է 1830-ական թվականներից: Արդեն 1845 թ. փոխարինել է հռչակավոր Իշտվան Սաբոին: Եղել է Կոլոժվարի (ներկայումս Ռումինիայի Կլուժ քաղ.) Բարձրագույն ուսումնական բժշկական ինստիտուտի պրոֆեսոր: Ունեցել է դասավանդման անզուգական շնորհք: Ղեկավարել է ընդհանուր բժշկության ամբիոնը, կարդացել դասախոսություններ կենդանաբանության, դատական բժշկության և լեթարգիայի դասընթացներում: Զբաղվել է կանանց հիվանդություններով և դատական բժշկության խնդիրներով: Մեծ ավանդ ունի Հունգարայում դատական բժշկության կազմա-*

կերպման, բուհական ուսուցման և զարգացման գործում: Հեղինակ է դատական բժշկության վերաբերյալ մի շարք անտիպ աշխատությունների: Մահացել է 1854 թ. որովայնային տիֆից:

Վերգար Յանոշ: Իսկական անունը եղել է Վրզարյան Հովհաննես: Եղել է XIX դ. Հունգարիայի Գեռլա քաղաքի անվանի պրակտիկ բժիշկներից մեկը: Ունեցել է բժշկապետի պաշտոն: Եղել է Հունգարիայի Կոլոժվար քաղաքի համալսարանի սանիտարիայի պրոֆեսոր: Արժանացել է մեծ առանձնաշնորհների և պատիվների:

Վոլֆյան Աստվածատուր: XIX–XX դ.: Աշխատել է Եղիսաբեթուպոլսում:

Փոփովիչ Անդրեաս: Ծնվել է 1809 թ. Հունգարիայի (հետագայում Ռումինիայի) Սուչավա քաղաքում, բնիկ հունգարահայ ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: 1827 թ. ավարտել է Պեշտի վարժարանը: 1827–1831 թթ. սովորել և ավարտել է Պեշտի համալսարանի բժշկական բաժինը: 1831–38 թթ. ապրել և աշխատել է Մոլդավայի Եաշի քաղաքում: 1838 թ. բարեկամների խորհրդով տեղափոխվել է Կ. Պոլիս և բնակություն հաստատել Հասքեոյում: 1850 թ. Հ. Մյուհենտիսյանի տպարանում հրատարակվել է նրա «Արուեստ երկարակեցութեան» գիրքը (400 էջ), որը հետագայում աշխարհաբարով հրատարակվել է երկրորդ անգամ: 1852 թ. ամուսնացել է և ունեցել որդի և դուստր: 1856 թ. ընտրվել է Կայսերական բժշկական ընկերության անդամ: Մահացել է 1858 թ. դեկտեմբերի 29-ին, Հասքեոյում և թաղվել տեղի գերեզմանատանը:

Փոփովիչ Էմմանուել: Ծագումով հունգարահայ է: Անդրեաս Փոփովիչի եղբորորդին է: Եղել է բժիշկ Ռումինիայի Ֆոքշան քաղաքում:

Ֆեհերյան Դավիթ: Ազգանունը գրվել է նաև Ֆեհեր տարբերակով: Իսկական ազգանունը եղել է Ճերմակյան: Ապրել է XIX դարավերջին և XX դ. սկզբին, աշխատել Ճուրճով Սենդ Միքլուշիում:

Օգտագործված գրականություն

1. Ա. Ա ը ր ա հ ա մ յ ա ն. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության. Երևան, 1964:
2. «Առողջապահություն». Երևան, 1972, № 4:
3. «Առողջապահություն». Երևան, 1981, № 1:
4. Ա. Բ ա խ չ ի ն յ ա ն. Հայազգի գործիչներ. Երևան, 2002:
5. Թ ե ո դ ի կ. Ամենուն տարեցույցը, 1907–1929:
6. «Հայրենիքի ձայն», Երևան, 19. IV. 1972:
7. «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1906, № 4:
8. «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1906, № 7:
9. Հայկական համառոտ հանրագիտարան. հ. 1–3, Երևան, 1990-2000:
10. Հայկական սովետական հանրագիտարան. հ. 1–12, Երևան, 1974-1986:
11. Ա. Մ ե զ պ ո ւ ր յ ա ն. Հայ և ծագումով հայ բժիշկներ. Ատամբուլ, 1950:

12. Մ. Պ ո տ ո ւ ր ե ա ն. Հայ հանրագիտակ. գիրք Ա–Ե. Պուքրեշ, 1938-1940:

13. Գ. Ս ա ֆ ա ն յ ա ն. Կենսագրական բառարան. հ. 1–3. Երևան, 1973-1990:

14. Ն. Տ է ր - Մ ի ք ա յ է լ ե ա ն. Նշանավոր հայազգի մարդիկ. Պէյրութ, 1988:

15. Ա. Փ ա շ ա յ ա ն. Տիտղոսակիր հայեր. 15–19-րդ դարեր, Երևան, 2001:

16. С. А р у т ю н я н и др., Я – армянин. Ереван, 2000.

17. Л. О г а н е с я н. История медицины в Армении, т. 4. Ереван, 1946.